Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 595 — ՇԱԲԱԹ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1885 — (Ն. Տ.) 6 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 — 30 ԲԷՊԻ ԻՒԼԻՍ ԷՎՎԷԼ, 1303

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՁ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂԿԵԼ.
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ
Գալաթիա, Նորատունկեան-խան

غزته‌سنه اداره‌سی

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

les annonces sont reçues à l'EASTERN AGENCY
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Համար Տարեկան դահեկան արժէք	200
» » Վեցամսեայ »	100
» » Եռամսեայ »	50
Գաւառաց » եւ տեղական թղթատարով տարեկան »	240
Գաւառաց հասնելու եւ տեղական թղթատարով վեցամսեայ »	120
Օտար երկիրներու տարեկան Գրանց	58
» » վեցամսեայ	26

Դրամը ղրկուած լրագրոյ հասնելու ծախքը Տնօրէնութեան վրայ է։ Խմբագրութենան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԴԷՐՆ ԷՃԷՆՍԻ
Գաղաթալտրախեան յեռաքարտ, Գալա-էյ, Տէյրմէն-խան

Կ. ՊՈԼԻՍ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ Ի ՎԵՐՍԱՅԼ

Մերակոյսին և Երեսփոխանաց ժողովին անդամք դեկտ. 28 ին գնացին Վերսայլ։ Ազգային ժողովը յաւուրս ամեն նիստ Վերսայլի մէջ կ'ընէր, Բարիզի ամբոխին ճնշումէն զերծ մնալու համար։ Եւ թէպէտ Մերակոյսն և Երեսփոխանութիւնը Բարիզ վերադարձած են քանի մը տարիներէ հետէ, բայց հանդիսաւոր և վճռական պարագային մէջ երկուց ժողովոց միութեամբ կազմեալ Ազգային ժողովն ի Վերսայլ գումարելու սովորութիւնը մնացած է, յիշեցնելու համար միշտ թէ Բարիզ յեղափոխականաց կեդրոն մ'է։

Մերակոյսի Նախագահ Պ. Լը Ռուայէ կը նախագահէր, և առեանը բացուկէս օրէն եռքը ժամ 1 ին։ Միապետականք բողոքագիր մը պատրաստեր էին, որով կը յիշեցնէին թէ Երեսփոխանական ժողովը 22 Միապետական Երեսփոխանաց ընտրութիւնն անվաւեր հրատարակած լինելով, և նոր ընտրութիւնք աւարտած չլինելով դեռ, Ազգային ժողովն, իւր անդամոց ամբողջութենէն զուրկ, չէր կրնար վաւերական նիստ մ'ընել։ Բայց Նախագահն, յիշեցնելով թէ Ազգային ժողովոյն միակ գործն ընտրութիւն մը կատարել էր, յայտարարեց թէ ո՛չ ումեք խօսք պետի տայ։ Ասոր վրայ Միապետականք աղմուկներ յարուցին, և նիստը բոլորովին խանգարեցին։ Աջակողման և Ձախակողման Երեսփոխանք, իրարու երեսն ի վեր ծանր բառեր արձակելէն ետքը, սպառնալիքներ տեղացին, և մինչեւ իսկ կռուներ ցուցուցին։ Երկու ընդդիմադիր Երեսփոխանք իրապէս կռիվարար մը սկսան, ամենուին անտես ընելով ժողովոյն վեհութիւնն և պարագային հանդիսաւորութիւնն։ Հանդիսատես տիկնայք ոմանք սարսափահար մարեցան ինկան, և հարկ եղաւ որ բարապանք միջամտեն, որք, երկու կողմէն անխտրաբար կռուի հարուածներ ընդունելէ յետոյ, դժուարաւ զատեցին երկու . . . օրէնդիրները։

Բաղմաթիւ հանրապետական Երեսփոխան, որք առաջին քուէարկութեան մէջ Պ. Կրէվիէ տարբեր ընտրելոյ մը քուէ տալ կ'ուզէին, երկրորդ քուէարկութեան մը վտանգներէն խոյս տալու համար առաջին քուէարկութեան մէջի իսկ Պ. Կրէվիէ տալ որոշեցին իրենց քուէն։ Միապետականք, խառնաշփոթութեան մէջ չկրնալով որոշել իրենց ընթացքը, խորհրդակցութեան համար սենեակ մը քաշուեցան, և որոշեցին ձեռնպահ մնալ քուէարկութեան մէջ։

Նախագահն յայտարարեց թէ քուէարկութիւնն անուանական պիտի լինի. այսինքն՝ ամեն Երեսփոխան ոյր անունը կարդացուի, պիտի երթայ իւր ձեռօք դնել իւր քուէն տուփին մէջ։ Այս գործողութիւն տեւեց երկու ժամ, և արդիւնքը Նախագահն հռչակեց սապէս։

«Թիւ քուէարկուաց	589
Սպիտակ թուղթ	13
Իրական քուէ	576
Մեծամասնութիւն	289
Պ. ԿՐԷՎԻԻ համար	437

Այս արդիւնք ողջունուեցաւ երիցս կրկնուած ծափահարութեամբ եւ «Կեցցէ՛ Հանրապետութիւն» աղաղակներով։ Միայն Աջակողմն և Ծայրագոյն Ձախակողմը լուռ էին։ Նախագահը շարունակեց։

«Պ. Պրիսոնի համար	68
Պ. տը Ֆրէսինէ	14
Անագօլ տը լա Ֆորժ	10
Ձանազանք	27

Միապետականք նորէն բողոք բառնալ ուզեցին։ Նախագահը նստին տեղագրութիւնն՝ որ անմիջապէս պատրաստուած էր՝ ժողովոյն վաւերացման ենթարկեց, նոր նստի մը պէտք չմնալով։ Այս պահուս, բեմն ելնելու համար Միապետական ատենադպրքն զիրար կը գլէին, և բարապաններուն կը բախէին։ Նախագահն յայտարարեց թէ Ատենագրութեան վրայ դիտողութիւնները կ'ընդունի, և ըստ այնմ Աջակողման բողոքն արձանագրել տուաւ։ Բայց տեսնելով թէ ընդմիջումնը և չփոթութիւնք վերջ գտնելիք չունին, գրքերը դրաւ, և յայտարարելով թէ նիստը վերցած է, սենեակն ելաւ։ Այսպէս ցրուեցաւ Ազգային ժողովը։

Բարիզ անտարբեր լսեց ընտրութեան արդիւնքն։ ո՛չ դժգոհութիւն, ո՛չ լուսավառութիւն։

ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ Ի ՖՐԱՆՍԱ

Պ. տը Ֆրէսինէ, արտաքին գործոց Նախարար Պ. Պրիսոնի Նախարարութեան մէջ, և նախկին Նախարարապետ, է նորէն Ֆրանսայի Նախարարապետն։

Ինչպէս կը յիշուի, Պ. Պրիսոն, նախկին Նախագահ Երեսփոխանաց ժողովոյն, Նախարարապետի պաշտօնն ընդունած էր երբ, Պ. Ժ. Ֆերրիի անկումէն յետոյ, ո՛չ մէկ հանրապետական քաղաքագէտ յանձն կ'առնուր զայս ծանր պաշտօն։ Պ. Պրիսոն բովանդակ հանրապետական կուսակցութեան ամեն մասանց խնդրանաց վրայ ընդունած էր Նախարարապետի պաշտօնը։ Բայց հազիւ 8 ամիս եռքը, մի և նոյն խնդրոյ պատճառաւ ում Պ. Ֆերրի կը պարտէր իւր անկումն, Պ. Պրիսոն եթէ ոչ պաշտօնական բայց իրական պարտութիւն մը կրեց ընտրեալ ժողովոյն մէջ, և քուէի կեղակարծ մեծամասնութեամբ միայն ընկալուեցաւ տալով Թոնքինի վարկերը։ Պ. Պրիսոնի հրաժարումն յետաձգուած էր ցկատարումն Նախագահական ընտրութեան, և թէպէտ Պ. Կրէվի շատ ստիպեց զՊ. Պրիսոն հրաժարումէն ետ կենալու, բայց, հանրապետական կուսակցութեան մէջ տիրող խորին բաժանումներէն վշտահար, Պ. Պրիսոն կերպիւ իւրաքանչիւր վրէժ լուծեց իւր կուսակցութենէն, պնդելով հրաժարմանը վրայ։

Պ. տը Ֆրէսինէ դժուարութիւններ կրեց մի և նոյն պատճառաւ։ և թէպէտ Հանրապետականաց բաժանումները պահ մը վարագուրած կ'երեւի՝ ձեռնարկելով նոր նախարարութեան մը կազմութեան, բայց իւր նախարարութիւն եւս, ինչ որ լինի կազմութիւնն որ անծանօթ է դեռ, տեւական չի կրնար համարուիլ։

* * *

Երրորդ Հանրապետութեան հաստատումէն ի վեր (1870 սեպտ. 4), 109 պետական մարդիկ նախարարական պաշտօն վարած են, երկիրս չհաշուելով զանոնք որ մէկէ աւելի անգամ նախարար եղան։ Նախարարական պաշտամանց թիւն է այժմ 11, բայց երբեմն 9 կամ 10 էր։ 109 նախարարներէն աւելի քան 90ն ողջ են. և բարեբախտութիւն մ'է Ֆրանսայի համար որ նախորդ նախարարք հանգստեան թոշակ չեն ըստանար։ 15 տարւոյ մէջ 14 նախարարապետք պաշտօն վարած են, որք են, Թուլանի կարգաւ, Ժիւլ Ֆաւր. Տիւֆոռ (երկրց). Պրոյլի Դուքսն (երկրց). զօրավար Սիսէյ. Պ. Ֆիւֆէ. Պ. Ժիւլ Սիմոն. զօրավար Ռոչպուէ. Պ. Վատէնկդոն. Պ. տը Ֆրէսինէ (երկրց). Պ. Ժիւլ Ֆէերրի (երկրց). Կամպէդդա. Պ. Տիւբէր. Պ. Ֆայրէր և Պ. Պրիսոն։ Ըսել է թէ, միջին հաշուով, Նախարարապետ մը տարի մը պաշտօն կը վարէ ի Ֆրանսա, ընդ երրորդ Հանրապետութեամբ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ.

Բարիզի արմատական Քաղաքային խորհուրդը տարեկան 12,000 ֆր.ի դումար մը քուէարկեց որպէս զի Սորպոնի մէջ Ֆրանսական Ցեղափոխութեան Պատմութեան համար յատուկ դասախօսութիւն մը հաստատուի։ Հանրային կրթութեան Նախարար Պ. Կոպլէ այս դասախօսութիւնն աւանդելու յարմար լրագրոյն կը համարի զՊ. Օլար, որ մի քանի տարիներէ հետէ Ցեղափոխութեան վրայ շարաթն անդամ մը յօդուած մը կը հրատարակէ Պ. Ֆլիմասոյի ժէ-ոպէս անուն արմատական թերթին մէջ։

ԴԵՐՄԱՆԻԱ. Լէոբոլտ Ցոն Ռանքէ Ծերունի պատմաբանին և Մէնձէլ Ծերունի պատմաբանին տարեդարձներուն առթիւ տեղի ունեցած ժողովրդային ցոյցերէն ետքը, գերմանական լրագրութեան երիցագոյն ներկայացուցիչ Տր. Հայնրիխ Բրուդէի 70րդ տարին թեւակոխելուն առթիւ, իւր հարեւանակիցներէ շատեր համակրանաց և ցնծութեան նմանօրինակ ցոյցեր ըրին։ Տր. Հայնրիխ է միանգամայն բաւական նշանաւոր բանաստեղծ մը և թատերգակ մը։ 1855էն մինչև 1871, Քէօնիկսբէրկի Զայտունկի խմբագրապետն էր, և գերմանական Կայսրութեան վերահաստատումէն ի վեր, ի Պերլին կը բնակէր, Գերմանիոյ նոր մայրաքաղաքէն գրելով իւր թերթին։ Անցեալ տարի քաշուեցաւ լրագրական ասպարէզէն, ինքզինք բոլորովին թատերգութեան նուիրելու համար։ Իւր պատմական թատերգութիւնք նոր տպագրութիւններու արժանացան վերջերս։

Ի ԲԻՐՈՌ. Սերպք կ'ամբաստանեն Պուլկարները թէ Բիրոդէ ելնելէ առաջ բոլորովին աւարի մատնած են քաղաքը։ Պուլկարք կ'ուրանան։ Բայց չեն ժխտեր թէ վերցուցած են Բիրոդի եկեղեցւոյն մեծ զանգակը։ Պուլկարք զայս կ'արդարացնեն, ըսելով թէ Իշխանն ինք հրամայեց բառնալ և Սոֆիա տանիլ զայն, «որովհետեւ կը փափաքէր տիրանալ ա՛յն զանգակին որ զառաջինն հնչեցուցած էր պատերազմի յայտարարութիւնն ընդդէմ Պուլկարիոյ»։ Պէտք է խոստովանիլ թէ Ալէքսանդր Իշխանն, իւր գերմանական իմաստասիրութեամբ, չատ նրբօրէն կը մտածէ մարդկային ճակատագրի հակադրութեանց վրայ։ Ն. Բարձրութիւն Սերպերուն գանգատը լսելով, յայտարարեր է թէ պարտաւոր է զանգակին գինը վճարել։ Սերպք պատասխաներ են թէ Միլան Թագաւորին նուէրն էր այն, ուստի չեն կրնար գին կարել։ Այնուամենայնիւ, Ալէքսանդր Իշխանը տրամադիր չէ ետ ղրկել չարագոյժ զանգակն, որ Միլան Թագաւորին պատարագի անիրաւ յայտարարութեան արձանագրեալ տարեւոր անուններուն յանգանքը գործած էր։ Իշխանը կրպնդէ ոսկի և արծաթ ֆրանքներով փոխարինելու Սերպոյ Թագաւորին այս անգին նուէրն իւր Բիրոդցի հաւատարիմ հպատակաց, որք երկու շարաթ յառաջ հանրագրեր ստորագրելէ յետոյ, որովք չերմ փափաք կը յայտնէին Պուլկարիոյ հետ միանալու, այժմ նոյնքան չերմ փափաք կը ցուցնեն ձեռքէ չհանելու իրենց սիրելի Միլան Թագաւորին թանկագին նուէրը։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍԵՐ 25րդ տարեդարձին առթիւ, Ռուսիոյ և Աւստրիոյ Կայսերք, Իտալիոյ Թագաւորն, Սպանիոյ Քրիստինէ Թագուհին և ուրիշ Վեհապետներ իրենց խնդակցութիւնները ղրկեցին ի ձեռն բարձրաստիճան պաշտօնակալաց, շնորհաւորական ինքնագիր նամակներով։

ԱՒՍՏՐԻՈՅ մէջ, նոր հրամանագրոյ մը համեմատ, առաջիկայ Բարեկենդանի առթիւ, ո՛չ ոք կարող պիտի լինի կրօնաւորի կամ մայրապետի կերպարան մտնել դիմակաւոր պարահանդէսներուն մէջ, ժողովրդեան կրօնային զգացումները չվիրաւորելու համար։

—Ռուս երեւելի պատկերհան Պ. Վէրէշչակինի խելքին փչած էր վերջերս յօրինել պատկեր մը Մարդ Ընդանէին անուամբ, յորում կը ներկայացնէր զՄէրն Յիսուս Քրիստոս իւր մօր և միւսգամայն «իւր եղբարց և քերց» հետ, բացատրութեամբ մը զոր կուտար պատկերին ներքեւ, թէ Յիսուս Քրիստոս ֆիղիքապէս եղբայրներ ու քոյրեր ունէր, որոց իւրաքանչիւրն իւր մչկած արհեստին կամ հետեւած կոչմանն հետ կը պատկերացնէր իւր նկարին մէջ։ Այս պատկեր, հեղինակին ուրիշ գործոց հետ, ի տես հասարակութեան դրուեցաւ Վիէննայի և ապա Բէյդրայի նկարահանդէսներուն մէջ։ Աւստրիոյ և Հունգարիոյ Կարդինալք դատապարտեցին զայն, և Ղերմ Կաթոլիկներ զգուշացան զայն դիտելէ։ Բայց կառավարութիւնը չմիջամտեց։—Այս դէպք մասնաւոր ուշադրութիւն դրաւեց անցեալ շաբթու մէջ, յոյժ փոքր մ'եղաւ յիշեալ պատկերն այրելու, թէև անյայտ։ Փորձն ընող մարդուն համար կ'ըսուի թէ «կրօնամոլական խելագարութենէ» բռնուած է։ Սա քանիցս ներկայանալով Բէյդրայի նկարահանդէսին անօրէնութիւնուն, ամենախիստ բանիւք պահանջած էր բառնալ զայն գայթակղական պատկեր։ Նախընթաց կիւրակին ի ծունր իջած էր առաջի մի քանի այցելուաց, ըսելով. «Ես Աստուծոյ կողմէ զրկուած եմ, և կը հրամայեմ որ պատկերն այրուին»։ Տեսնելով թէ իւր այս ազաչանքներ չեն գործադրուիր և ինք խենդի մը տեղ կը դրուի, խելոք մարդը վիրաւորելով ոչնչացնել ուզեց Վէրէշչակինի քմահաճութեան պտուղն, (որ իրրեւ պատկեր առաջնակարգ գեղեցկութիւն մը ունի եղեր,) բայց չյաջողեցաւ։

ՏՕՆԻ օրերն երբ կը մերձենան, ի դէպ է յիշեցնել թէ, դեկտ. 28 ին, Ֆրանսայի Երեսփոխանաց ժողովն հաւանեցաւ կառավարական ծրագրոյ մը, որուն համեմատ Զատկին երկուշաբթին և Հոգեգալստեան երկուշաբթին օրինական տօներ պիտի նկատուին։

ԼԻՆԶԻ օրէնքն իւր ամենէն վայրագ ձեւով նախընթաց շաբթու մէջ ի գործ դրուեցաւ Միացեալ Նահանգաց մէջ։ Ալապամա նահանգին կէնդաուն քաղաքին մէջ, Ռիտ ամերիկեան անունը կրող սեւամորթի մը առեւանգեց և քսանեց աղջիկ մը, և ապա փախաւ։ Ցեղոյն բուռնդակ ժողովուրդը փնտռեց չարագործը, զոր ի վերջոյ դեռի մը վրայ բռնեց։ Ռիտ երկու հարիւր մարդոց պահպանութեան ներքեւ տարուեցաւ ոճրագործութեան վայրն, ի կէնդաուն, ուր հասաւ նախընթաց կիւրակի։ Հոն խոստովանեցաւ իւր ոճիրն, ապա, շղթայապիրկ կապուեցաւ ծառի մը, և կենդանւոյն մատնեցաւ բոցերուն։ Հինգ հարիւր անձինք, սպիտակամորթք եւ սեւամորթք, կը դիտէին զայս տեսարան։ Այրել բաւ չհամարուեցաւ, և տանջանքն աւելցնելու համար, փայտի դեղ մը քիչ մը առեն վառելէն և մարմինը բռնկցնելէն յետոյ, կը լուծէին և կը ցրուէին, և պահ մը յետոյ ուրիշ դեղ մը կը նետուեր կրակին մէջ։ Այսպէս փոխ առ փոխ խորովելէ և այրելէ յետոյ, չարագործն անկարգարելի տառապանաց մէջ հոգին փչեց, և բոլորովին մոխիր դարձաւ։ Հանդիսատեսք չցրուեցան մինչեւ որ Ռիտի մարմնոյն իսկոյնիր վերածուիլը տեսան։

ՊՈՒԼԿԱՐ ԲԱՆԱԿՆ. Օրանոցին Սոֆիայի Թղթակիցը կը հեռագրէ դեկտ. 30 թուով հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները.

«20,000 պուլկար զօրք պիտի ձմերեն ի Սոֆիա. 5,000 ի Զարիպրոտ. 3,000 ի Դրն. 5,000 ի Բիւսդէնտիլ. 3,000 ի Ռատոմիր. 1,000 ի Բրեանիք. 1,000 ի Սլիվնիցա. 3,000 ի Օրխանիէ. 3,000 ի Սամաքոֆ, և 2,000 ի Տուպնիցա. գումար, 47,000 զօրք Պալքանաց հարաւակողման գաւառաց մէջ, Մերպոյ հանդէպ, մերձ ի սահմանագծին։ 30,000 զօրք ալ պիտի պահուին Վիտինի գաւառին մէջ։ Իսկ Բուլգարիի քաղաքապահ զօրքերը կը ճամբուին իրենց բնակավայրերը։ Ցուրտն ա՛յն սաստիկն սաստիկ է, որ վերջին երկու շաբաթներուն մէջ ոչ հաւնի զինուորք սառեցան։

—Նոյն Թղթակից կը հեռագրէ նաև հետեւեալը.

«Պուլկարիոյ նախարարներէն երկուքը, Պ. Բարավէլոֆ (նախարարապետ) և Պ. Զանոֆ (արտաքին գործոց նախարար) կ'ընդդիմանան Ալէքսանդր Իշխանին առաջադրած ուղղութեան ի Բեդերսպուրկ, և կ'աշխատին Բ. Դրան հետ համաձայնութիւն մը յառաջ բերել և Իշխանին այցելութիւն մ'ընել տալ ի Կ. Պոլիս։ բայց Պ. Սդոյլոֆ և Պ. Զանքոֆ, Իշխանին նախամեծար խորհրդատուք, կը փաստաբանեն Ռուսիոյ հետ հաշտութիւն և սերտ համաձայնութիւն մը։ Իշխանը դեռ չէ որոշած թէ ո՛ր կողման պիտի յարի։»

Պ. ԿԼԱՏՍԹՈՆ իւր 76 րդ Ծննդեան տարեդարձը տօնեց Հաւարտքնի դղեակին մէջ դեկտեմբեր 26 ին։ Հաղարի

—)(4)(—

ԹԵՐԹՈՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՎԷՐՆ

ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

ՈՒՂԵՒՈՐ ԱՂԱՅԻՆ

Շատ հաւանական էր, եղած նախապատրաստութիւններուն նայելով, որպէս զի եթէ ուրիշի ձեռք անցնէր, չկրնար կարդացուիլ։ Թղթակցելու համար՝ թղթատարութիւն կամ հեռագրաթել չգործածել, այլ ուղեւոր աղուեալ արտասովոր բնագրման դիմել, կը նշանակէր թէ՝ այնպիսի գործի մը վրայ էր, զոր բացարձակապէս ծածուկ պահել կ'ուզուէր։

—Թերեւս, ըսաւ Սարքանի, այս տողերու մէջ գաղտնիք մը կայ որ կրնայ մեր քաղդը լինել։

—Եւ այն ժամանակ, պատասխանեց Զիրոն, այս աղուեալի դիպուածին ներկայացուցիչն եղած կը լինի, որուն ետեւէն կը վազենք առաւօտէն ի վեր։ Ատուա՛ծ իմ, քիչ մնաց որ պիտի խեղդէի . . . : Սակայն կարեւորը՝ վրայի պիտակը ձեռք անցուցանելն էր, սուրհանդակը կրնանք ետիլ ուտել . . .

—Մի՛ ամաչարեր, Զիրո՛ն, ըսաւ Սարքանի երկրորդ անգամ ազատելով թաշուենին կեանքը։ Թերեւս այս աղուեալ միջոցաւ կարող կը լինինք հասկնալ պիտակին ընկալուն, պայմանաւ որ Թրիէստ բնակի։

—Եւ ապա՞. այդպէսով չես կրնար հասկնալ այդ պիտակին պարունակութիւնը։

—Ո՛չ, չեմ կրնար, Զիրո՛ն։

—Ո՛չ ալ ուսա՞ի դալը։

—Անշուշտ։ Բայց եթէ երկու թղթակիցներէն մին ճանչեմ, կը յուսամ որ միւսն ալ ճանչելու գործը կը դիւրանայ։ Ուրեմն, փոխանակ սպաննելու զայդ աղուեալն, ընդհակառակն կազդուրենք, որպէս զի կարենայ երթալու տեղը ժամանել։

—Պիտակո՞վ հանդերձ, հարցուց Զիրոն։

—Այո՛, բայց օրինակը կ'առնում և կը պահեմ մինչեւ որ պէտք լինելու ժամանակը գայ։

Ցայնժամ Սարքանի փոքրիկ տետրակ մը հանեց ծոցէն, և մատիտով օրինակեց պիտակը։ Գիտնալով որ ծածկագրութեանց մէջ՝ անոնց նիւթական ձեւէն ալ պէտք չէ բան մ'անտես ընել, հոգ տարաւ բառերուն ճիշդ չարքն ու իրարմէ հեռաւորութիւնը պահել։ Այս ընելէ յետոյ, պատճէնը տետրակին մէջ դրաւ, պիտակն ալ քսակիկին մէջ, և քսակիկն ալ աղուեալն թեւին տակ։

Զիրոն կը նայէր՝ առանց իւր ընկերին յայտերուն բաժանորդ լինելու։

—Այժմ ի՞նչ պիտի ընենք, ըսաւ։

—Այժմ խնամ պէտք է տանիս սուրհանդակին, պատասխանեց Սարքանի։

Աղաւնին առաւել նօթութիւնէ ուժասպառ եղած էր քան թէ յոգնելէն։ Թեւերը վնասուած կամ վիրաւորուած չէին, հետեւաբար իւր առաժամայ տկարութիւնն ոչ որսորդի մը կապարի հատիկներէ, ոչ ալ չարաճճի տղու մը քարի հարուածէն յառաջ եկած էր։ Նօթի, մանաւանդ ծարաւի էր։

Զիրոն, դեռեւին երեսէն քանի մը միջատ, քանի մ'ընդեղէնի հանելի դատաւ, զրոս Թռչունն ախորժելով կերաւ։ վերջապէս հին խեցեղէն տանի մը բեկորին մէջ վերջին անձրեւէն մնացած քիչ մը ջուրէ հինգ վեց կաթիլ խմցուց։ Այնպէս որ, բռնուելէն կէս ժամ յետոյ, աղուեալն, նոր զգուած, տաքցած, կազդուրած, կատարելապէս պատրաստ էր իւր ընդմիջեալ ուղեւորութիւնը շարունակել։

—Եթէ տակաւին հեռի տեղ պիտի երթայ, ըսաւ Սարքանի, եթէ երթալու տեղը Թրիէստն անդին է, բնաւ փոյթ չէ մեզ եթէ ճանրան մնայ և չկրնայ հասնիլ։ իսկ եթէ, ընդհակառակն, Թրիէստի տուներուն մէկին կ'ոգտուի, և անդ պիտի կանգ առնու, հոն հասնելու բաւական ուժ ունի, վասն զի մի կամ երկու վայրկեան միայն թռչելու պէտք կ'ունենայ։

—Կատարելապէս իրաւունք ունիս, պատասխանեց Սիկիլիացին։ Բայց կրնա՞ք տեսնել զայն մինչեւ որ երթալու տեղն հասնի, թէեւ Թրիէստէն անդին չերթայ։

—Դէր համար ալ պէտք եղածը պիտի ընենք, ըսաւ Սարքանի պարզապէս։

Մայր եկեղեցին, որ երկու ռամանեան հին եկեղեցիներէ կը բաղկանայ, մին Ս. Աստուածածնի նուիրեալ, միւսը Սան-Ջուսթոյի, Թրիէստի պաշտպանին, բարձր աշտարակ մ'ունի ճակատին անկիւնը, մեծ վարդաձեւ կամարով մը, որդ տակ կը բացուի շինքին դլխաւոր դուռն։

Աշտարակը Քարէի բլրոյն սարահարթին վրայէն բովանդակ Թրիէստի վրայ կը նայի։ Այն բարձր կէտէն դիւրաւ կը տեսնուին սուտներուն տանիքները, բարձրաքանդակ քարտիսի մը նման, առաջին զառիվայրերէն սկսեալ մինչեւ ծովածոցն։ Ուստի դժուարին չէր աղաւնւոյն ընթացքը դիտել, պայմանաւ որ աշտարակին բարձրէն արձակուէր։ յետոյ դիտել թէ ո՛ր տուն պիտի երթար ապաստանէր, եթէ Թրիէստի մէջ էր երթալու տեղն, և ոչ Իլլիւրական թերակղզւոյն մէկ ուրիշ քաղաքին մէջ։

Այս փորձ կրնար յայտնել։ Ուստի կ'արժէր փորձել։ Թռչունն արձակելէ վատ ուրիշ բան չէր մնացած։

Սարքանի և Զիրոն ելան վարդի դեղեզմանոցէն, և եկեղեցւոյն տուրեւի փոքր հրապարակն անցնելով դէպ յաշտարակն ուղղուեցան։ Աշտարակին դուռը բաց էր։ Ներս մտան և պտուտաւոր սանդուղքին տաժանելի աստիճաններէն վեր ելնել սկսան։

Երկու կամ երեք վայրկեան պէտք եղաւ կատարն հասնելու համար, մինչեւ չէնքը պտկող յարկին տակ, որում արտաքին պատշգամ մը կը պակի։ Բայց այն յարկ երկու պատուհան ունի աշտարակին մէն մի երեսին վրայ, ուստից մարդ կրնայ ծովուն և բլրոյ կրկին հորիզոնին ամեն կողմերը տեսնել։

Սարքանի և Զիրոն դնացին կեցան այն պատուհանին մէջ, որ ուղղակի Թրիէստի վրայէն կը նայի։

Աշտարակը Քարէի բլրոյն սարահարթին վրայէն բովանդակ Թրիէստի վրայ կը նայի։ Այն բարձր կէտէն դիւրաւ կը տեսնուին սուտներուն տանիքները, բարձրաքանդակ քարտիսի մը նման, առաջին զառիվայրերէն սկսեալ մինչեւ ծովածոցն։ Ուստի դժուարին չէր աղաւնւոյն ընթացքը դիտել, պայմանաւ որ աշտարակին բարձրէն արձակուէր։ յետոյ դիտել թէ ո՛ր տուն պիտի երթար ապաստանէր, եթէ Թրիէստի մէջ էր երթալու տեղն, և ոչ Իլլիւրական թերակղզւոյն մէկ ուրիշ քաղաքին մէջ։

Այս փորձ կրնար յայտնել։ Ուստի կ'արժէր փորձել։ Թռչունն արձակելէ վատ ուրիշ բան չէր մնացած։

Սարքանի և Զիրոն ելան վարդի դեղեզմանոցէն, և եկեղեցւոյն տուրեւի փոքր հրապարակն անցնելով դէպ յաշտարակն ուղղուեցան։ Աշտարակին դուռը բաց էր։ Ներս մտան և պտուտաւոր սանդուղքին տաժանելի աստիճաններէն վեր ելնել սկսան։

Երկու կամ երեք վայրկեան պէտք եղաւ կատարն հասնելու համար, մինչեւ չէնքը պտկող յարկին տակ, որում արտաքին պատշգամ մը կը պակի։ Բայց այն յարկ երկու պատուհան ունի աշտարակին մէն մի երեսին վրայ, ուստից մարդ կրնայ ծովուն և բլրոյ կրկին հորիզոնին ամեն կողմերը տեսնել։

Սարքանի և Զիրոն դնացին կեցան այն պատուհանին մէջ, որ ուղղակի Թրիէստի վրայ կը նայէր, դէպի հիւսիսային-արեւմուտք։

Ժամը չորս կը զարնէր յայնժամ այն վերջատաներորդ դարու բերդին մէջ, որ Քարէի կատարը չինուած էր եկեղեցւոյն ետեւն։ Ցանաւին շատ լոյս էր։ Աուեւը մանրաբար մթնոլորտի մը մէջ յարմարաբար կը խոնարհէր դէպ Յադրիական ծուրին, և քաղաքին տուներուն մեծ մասն աշտարակին ուղղակի հանդիսակացեալ ճակատուն կ'ընդունէին արեւուն ճառագայթները։

Ուստի պարզ տեսանելիք էին։

Սարքանի ձեռքին մէջ առաւ աղաւնին, և վերջին գգուանքով մը զայն խրախուսելէ ետքն թող տուաւ։

Թռչունը բախեց թեւերը, բայց սրտագալէս վար իջնել սկսաւ, այնպէս որ պահ մը վախցուց թէ բուռն անկումն մը պիտի առարտէր զիւր օդաչու պատգամաւորութեան ասպարէզ։

Սիկիլիացին՝ դող ելնելով՝ յուսահատական բացագանչեցաւ մ'արձակեց։

—Ո՛չ, նորէն վեր կ'ելնէ, ըսաւ Սարքանի։

Եւ արդարեւ աղաւնին, օդին ստորին խաւերուն մէջ իւր հաւասարակշռութիւնը գտնելով, խոտորում մ'ընաւ, և դէպ ի քաղաքին հիւսիսային-արեւմտեան կողմն ուղղուեցաւ։

Սարքանի և Զիրոն կը դիտէին զայն։

Թռչունն, հրաչալի բնազդումէ մ'առաջնորդեալ, բնաւ վարանում չունէր իւր թռչիլն մէջ։ Դիտողը կ'դգար թէ ուղղակի իւր երթալու տեղը կ'երթար, ուր արդէն մէկ ժամ առաջ հասած պիտի լինէր, եթէ չհարկադրէր այն ակամայ դադարն ընել վազելի գերեզմանատան ծառերուն տակ։

Սարքանի և ընկերը սրտատանջ ուշադրութեամբ կը դիտէին զայն։ Կը հարցնէին միմեանց թէ արդեօք քաղաքին պարիսպները պիտի անցնէ՞ը, որով իրենց բոլոր յոյսը կը չքանար։

Բայց այնպէս չեղաւ։

—Կը տեսնեմ զայն . . . միւսն կը տեսնեմ, կը գոչէր Զիրոն, որուն աչքը վերջին սառիճան սուր էր։

—Գլխաւորապէս պէտք է կանգ առնելու տեղը դիտել, և այն տեղոյն դիրքը լաւ ճշդել։

Աղաւնին չուներէն քանի մը վայրկեան յետոյ տան մը վրայ իջաւ, որոյ սրածայր տանիքը չբնակայ տանց տանիքներէն տեւելի բարձր էր և թաւախիտ ծառերէ շրջապատեալ, քաղաքին այն մասին մէջ՝ որ հիւսիսանացին և հասարակաց պարտիզին կողմը կը գտնուի։ Հոն անթերեւոյթ եղաւ ձեղնայարկի լուսամուտ մը ներս մտնելով, որ յատակպէս կը տեսնուէր, և որոյ վրայ թափանցիկ երկաթէ հողմացոյց մը կար։

Ցեղոյն դիրքը նշգուելէ յետոյ, դժուարին չէր կրնար լինել դիւրաճանաչ հողմացոյցը նշանակէա բռնելով գտնել այն սրածայր ձեղնայարկն որոյ վրայ կը բացուէր լուսամուտն, և հետեւաբար այն տունն ուր կը բնակէր պիտակին ընկալուն։

(Շարունակելի)

ՀԱՅ ՆՈՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ֆարիզ, 5 յունվար

Կը հաւատան թէ նախարարաց առնուազն կէսը պիտի պահեն իրենց պաշտօնները և թէ Պ. տը Ֆրէյսինէ այսօր պիտի ամբողջացնէ նախարարութեան կազմութիւնը։

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լոնտոն, 5 յունվար

Խորհրդարանը պիտի բացուի յունվար 21 ին։

ՀՆՏԱԼԽՏՆ ՑՈՒՊԱՆԻԱ

Մատրիտ, 5 յունվար

Հնտալխտը վերստին երեւան եկած է Յիմէնէզիտաս և Սպանիոյ հարաւային քանի մը կէտերու վրայ։

Պերլին, 5 յունվար

Կէս պաշտօնական լրագիրը կը հերքեն այն լուրն թէ Պուլկարիոյ իշխանը պիտի ամուսնանայ Գերմանիոյ գահաժառանգ իշխանին դուստր Վիքթորիա իշխանուհւոյն հետ։

Մատրիտ, 5 յունվար

Խնամակալ Թագուհւոյն մէկ հրամանագիրը կը դադրեցնէ Խորհրդարանին նստերը։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 5 Յունուար, ժամ 5 վաղ. 15 երեկ.

Ընդլ. քաղաքագիտ.		99 9/16
Ասոն.	Սերի Դ. բացուեցաւ	14 1/16
»	» » փոցուեցաւ	14 7/8
»	» Ա.	26 1/4
»	» Բ.	45
»	» Գ.	13 7/8
Օթոման 1871		66 5/8
Խոնարհութիւն 1877		78 3/4
Պանք Օթոման		9 5/8
Ռուսական փոխառ. 1873		93 1/2
Եգիպտական միացեալ (Ամիֆիէ)		63
» առանձն. (բրիվիլեժիէ)		87 5/8
Տայրա Սանիէ		6 1/4
Ջօմանիա (փոխառ. Լաշէյտ)		87 7/8
Հունգարական պարտաթուղթ 4%		— —
Ոսմանեան Բանկի վրայ		25 42½

Վիեննա, 5 Յունուար, ժամ 4 երեկ.

Ոսմանեան Բանկի վրայ	126 70
Օսմանեան երկաթուղի	17 50

Բարիզ, 5 Յունուար, ժամ 3 վաղ. 45 երեկ.

Արտաքին Բանկի 4½%	109 85
» » 3 %	80 70
Օսմանեան քաղաքագիտ. Սերի Դ. բացուեցաւ	14 17½
» » » փոցուեցաւ	13 97½
» » Սերի Բ.	45 25
» » Գ.	44
Օսմանեան երկաթուղի	34 37½
» Բէտիի բաժնեթուղթք	417 50
Պանք Օթոման	485
Գրէտիտ Լիոնէ	— —
» Ֆոնսիէ	1347 50
Բանքնասիոնալ Լիոնի	1246 25
Ռուսական Ցանցք	2196 25
Ռուսական 5% 1871ի	102
Իտալական Բանքի	98
Եգիպտական միացեալ	323 75
Սպանական (արտաքին)	55 7/8
Բրէտիտ Ֆոնսիէ	341 25
5% Հէլլենական	278 75
Ձէջ Լանդաուի վրայ	25 23

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 5 Յունուար, ժ. 10 վ. 30 երեկ.

Ցիտանական Բանքի 4½%	109 85
Օսմանեան քաղաքագիտ. Սերի Դ.	13 92½
Եգիպտական	323 75

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՄԵՐ

ԱԺԱՆՈՅ ՀԱՎԱՍ

ՖՐԷՍՆԷԼԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Փարիզ, 5 յունվար

Կը հաւատան թէ նախարարաց առնուազն կէսը պիտի պահեն իրենց պաշտօնները և թէ Պ. տը Ֆրէյսինէ այսօր պիտի ամբողջացնէ նախարարութեան կազմութիւնը։

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լոնտոն, 5 յունվար

Խորհրդարանը պիտի բացուի յունվար 21 ին։

ՀՆՏԱԼԽՏՆ ՑՈՒՊԱՆԻԱ

Մատրիտ, 5 յունվար

Հնտալխտը վերստին երեւան եկած է Յիմէնէզիտաս և Սպանիոյ հարաւային քանի մը կէտերու վրայ։

Պերլին, 5 յունվար

Կէս պաշտօնական լրագիրը կը հերքեն այն լուրն թէ Պուլկարիոյ իշխանը պիտի ամուսնանայ Գերմանիոյ գահաժառանգ իշխանին դուստր Վիքթորիա իշխանուհւոյն հետ։

Մատրիտ, 5 յունվար

Խնամակալ Թագուհւոյն մէկ հրամանագիրը կը դադրեցնէ Խորհրդարանին նստերը։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 5 Յունուար, ժամ 5 վաղ. 15 երեկ.

Ընդլ. քաղաքագիտ.			99 9/16
Ասոն.	»	Սերի Դ. բացուեցաւ	14 1/16
»	»	» փոցուեցաւ	14 7/8
»	»	» Ա.	26 1/4
»	»	» Բ.	45
»	»	» Գ.	13 7/8
Օթոման 1871			66 5/8
Խոնարհութիւն 1877			78 3/4
Պանք Օթոման			9 5/8
Ռուսական փոխառ. 1873			93 1/2
Եգիպտական միացեալ (Ամիֆիէ)			63
» առանձն. (բրիվիլեժիէ)			87 5/8
Տայրա Սանիէ			6 1/4
Ջօմանիա (փոխառ. Լաշէյտ)			87 7/8
Հունգարական պարտաթուղթ 4%			— —
Ոսմանեան Բանկի վրայ			25 42½

Վիեննա, 5 Յունուար, ժամ 4 երեկ.

Ոսմանեան Բանկի վրայ	126 70
Օսմանեան երկաթուղի	17 50

Բարիզ, 5 Յունուար, ժամ 3 վաղ. 45 երեկ.

Արտաքին Բանկի 4½%	109 85
» » 3 %	80 70
Օսմանեան քաղաքագիտ. Սերի Դ. բացուեցաւ	14 17½
» » » փոցուեցաւ	13 97½
» » Սերի Բ.	45 25
» » Գ.	44
Օսմանեան երկաթուղի	34 37½
» Բէտիի բաժնեթուղթք	417 50
Պանք Օթոման	485
Գրէտիտ Լիոնէ	— —
» Ֆոնսիէ	1347 50
Բանքնասիոնալ Լիոնի	1246 25
Ցիտանական Բանքի	2196 25
Ռուսական 5% 1871ի	102
Իտալական Բանքի	98
Եգիպտական միացեալ	323 75
Սպանական (արտաքին)	55 7/8
Բրէտիտ Ֆոնսիէ	341 25
5% Հէլլենական	278 75
Ձէջ Լանդաուի վրայ	25 23

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 5 Յունուար, ժ. 10 վ. 30 երեկ.

Ցիտանական Բանքի 4½%	109 85
Օսմանեան քաղաքագիտ. Սերի Դ.	13 92½
Եգիպտական	323 75

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական ժողովը նկատելով որ իւր հոկտեմբերը 15 թուական շրջաբերականին վերջին երեք հարցմանց պատասխանները քանի մը դատառներէ և թաղերէ հասած չեն տակաւին, երկրորդ շրջաբերական մը ղրկած է որ փութով կը պահանջէ լիւեալ հարցմանց պատասխաններն։

Վերոյիշեալ շրջաբերական, ինչպէս կը լսուի, կը վերաբերէր ազգային վարժարանաց կրօնական ուսմանց աւանդման եղանակին, դասագրոց, ուսուցչաց և այլն։

Արաբկիրի առաջնորդ Գեր. Եղնիկ եպիսկոպոսի ճանապարհի ծախքը տեղւոյն ազգայնոց կողմէ ղրկուած լինելով, Ն. Գերապատուութիւն յկտ Մնքնդեան կ'ուղեւորի յիւր պաշտօնատեղին։

ՎԻԳԴՈՐ ՀԻԻԿՕ

ԹՇՈՒԱՌՆԵՐ

(ՊԱՏԳԵՐԱԶԱՐԴ)

Թարգմ. Գ. Զէլինսքիան

(Մասն Ա. — Ֆանթին)

Ա. ՀԱՅՈՐ

Ն. Կ. Պէրպէրեան և Ս. Տէվլիթեան էֆէնտիներու մեծաւոր հրատարակեալ ԹՇՈՒԱՌՆԵՐու երկրորդ տպագրութեան առաջին հատորն աւարտած է և կը վաճառուի ի գին 14 ղրուշի։

Բ. Հատորի առաջին երկու տետրերն ևս հրատարակուած են։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Ըստ առաջարկութեան Եվրոպական բարեւոքման Յանձնաժողովոյ և ըստ որոշման Նախարարաց Խորհրդոյ, կայսերական հրամանաւ՝ Օսմ. Ընդհանուր Պարտուց և Բէժիի վարչութեանց ընդհանուր քննիչ անուանեցաւ Վահան Թընկը։ Թուրք մամուլը գոհունակութեամբ կը ծանուցանէ զայս անուանում։

Մելանիկի Տէֆթէրտար Զիւհտի պէյ՝ նոյն պաշտօնով Տրիպոլոն փոխադրեցաւ և նմա յաջորդեց Տրապիզոնի Տէֆթէրտար Նաիմ էֆէնտի։

Գոնեայի Տէֆթէրտար անուանեցաւ՝ Գարասիի Տէֆթէրտար Մուխթար էֆէնտի և նմա յաջորդեց Գոնեայի Տէֆթէրտար Ղահէհտանին պէյ։

Պարսկական կառավարութիւնն Ա. բրեգական և Առիւծու պատուանշանի առաջին աստիճանն ընծայեց Վեհ. Սուլթանի Սենեկապետներէն Բաղիպ պէյի։

Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշա երէկ առաւօտ կայս. պալատ երթալով Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստացաւ։

Ն. Վսեժութիւն ապա Բ. Դուռն երթալով, երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

Գերմանական, աւստրիական և պարսկական դեսպանատնց առաջին թարգմանք, Սերպիոյ դեսպանն ու Գարատաղի գործակատարն երեկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Արտաքոյ գործոց Վեսմ. Նախարարին և խորհրդական Վեսմ. Տատեան էֆէնտի հետ։

Սարդէն Կ'իմանայ թէ Ամէնքի օսմանեան դեսպանութեան պաշտօնին համար երկու քնարելիք կան, մին՝ Յունանստանի նախկին պատուիրակ Խամսիլ պէյ և միւսը՝ Պեռատան խորհրդարդոյ անդամներէն Բիրա պէյ։

Կ'ըսուի թէ Կատան էֆէնտի Աղեքսանդր իշխանին կողմէ յատուկ պաշտօն մ'ունի Վեհ. Սուլթանին մօտ։ Թէեւ կայս. կառավարութիւնն հրահանգ ղրկած էր օսմ. պատուիրակին ծածկագիր հեռագրով հաղորդել իշխանին առաջարկներն, սակայն Կատան էֆէնտի պատասխաներ է թէ իրեն յանձնուած պաշտօնը կը պահանջէր որ ինք անձամբ Կ. Պոլիս գայ։

Գերմանիոյ Կայսեր գահակալութեան 25րդ տարեդարձին առթիւ, Վեհ. Սուլթանն ըստ սովորութեան շնորհաւորական հեռագիր մ'ուղղեց Ն. Վեհափառութեան։

Մէտիթեար կ'ըսէ թէ Աւստրիական դեսպան Բարէնֆէլ կոմսը շաբաթներէ կը տառապի և հիւանդութիւնը բաւական սաստկացած է։

Վեհ. Սուլթանի բժշկապետ և զինուորական հիւանդանոցաց քննիչ Մավրոյէնի փաշա քանի մ'օր առաջ Պէյլէրպէյի հիւանդանոցն երթալով, այցելեց հիւանդներն և աչքէ անցուցելով ներքին կարգադրութիւններն, իւր գոհունակութիւնն յայտնեց հիւանդանոցին տնօրէն Լամպիսի պէյին։

Նոյեմ. Էրէնդ լրագիրն լիշելով Կ. Պոլսոյ մէջ նոր Դեսպանախորհրդոյ մը գումարման զրոյցն, իրաւամբ կ'ըսէ թէ գործերն ուտելի արագ կրնան կարգադրուիլ, եթէ Եւրոպական դիւանագիտութիւնն հրաժարի Դեսպանախորհուրդ կամ Վեհաժողով գումարելէ, և ապատ թողու օսմանեան կառավարութիւնն ուղղակի բանակցիլ Ադեքսանդր իշխանին հետ Պէրլինի Դաշնագրոյն ներած սահմանին մէջ։ Սեպտ. 18էն ի վեր, կը լսէր Բեգրոպուրկի թերթը, Բ. Դուռն ըստ բաւականին ցոյց տուաւ իւր չափաւորութիւնն, և եթէ կը վախցուի որ Եւրոպոյ չմիջամտելովն պատ կրնայ հասնիլ, Կ. Պոլսոյ դեսպանը պատրաստ կեցած են և կրնան ի հարկին իրենց խորհուրդները տալ։

Այս օրերս մայրաքաղաքս բերուեցան Մոսկվին գործոց Նախարարութեան կողմէ յԵւրոպա յանձնարարեալ ծովառումբերն ինչպէս նաև նոյն նախարարութեան տպարանին վերաբերեալ գործիքներ։

Զէթինէէն կը գրեն թէ Պուլկարտարրին ազդեցութեան հետզհետէ զօրանալը մեծ մտահոգութիւն կը պատճառէ Սերպ ազգութեան և նոյն իսկ Բարատաղի ապագային համար։ Հետեւաբար ջանքեր կը լինին Բարատաղի և Սերպիոյ միջև կեցած հին թշնամութիւնները խաղաղեցնելու նպատակաւ, և այս տրամադրութիւն կը նշմարուի նաև ի Պելկրատ։ Տակաւին որոշուած չէ այս նպատակին հասնելու համար հետեւելի միջոցը։ սակայն պալքանեան խնդրոյն արդի կնճիռներն հարթուելէ յետոյ, Բարատաղի մէջ պիտի ձեռնարկուի Պելկրատի ու Զէթինէէի ժողովրդոց միջև մերձաւորութիւն յառաջ բերելով վերջ մը տալ իրաց այնպիսի կացութեան մը որ ցաւալի է երկու երկիրներուն համար համար։

Բիրոդի Զինուորական միջազգային ցանցնաժողովոյ նիստերու ատենագրութիւնք ամբոյ տակ են այս պահուս Վիէննայի արքունի տպարանին մէջ և պիտի զրկուին մեծ Տէրութեանց։

Վիէննայի կէս-պաշտօնական լրագիրք կը հերքեն Բարատաղի Կլա Զերնակոյա լրագրոյն Բլէկլիէի թղթակցին տեղեկութիւնները, թէ Աւստրիա զինուորական պատրաստութիւն կը տեսնէ այդ քաղաքին մէջ։

Էֆէնտլան Կոպէրն կը լսուայ որ Ֆրանսական և աւստրիական կառավարութիւնք պիտի յօժարին հունգ ուբեմն փակել Եգիպտոսի մէջ իրենց ունեցած նամակատուներն, ըստ որում եգիպտական նամակատունք մեծապէս կը վնասին այդ պատճառաւ։

Ռուսական Նէվէ Նովոյա չոգենաւն Օռէսայէն Սէվաստոպոլ գնացած պահուն Սեւ Ծովու Բարչակոմի կոչուած տեղն աւազի վրայ խրած էր, սակայն ռուսական չոգենաւային ընկերութեան կողմէ ղրկուած չոգենաւուց օգնութեամբ կրցաւ ազատիլ և իւր ճանրան շարունակել։

Մէտիթեար Օրիանթալ հեռեւալ տողերը կը գրէ Լօկարիտէս եղբարց տնանկութեան վրայ։

Եթէ վերստին կը խօսինք այս դրծին վրայ, պատճառն այն է որ ժամանակին բարձր տեղէ հրաման ղրկուած էր Հասան Ֆէհմի փաշային, երբ Ն. Վսեմութիւն դատական նախարար էր, որպէս զի ուշադրութիւն դարձնէ այս կարգի տնանկութեանց վրայ որք երկրին վարկը կը կոտրեն։

Առեւտրական դատարանը, Լօկարիտէս վաճառատան տնանկութեան քննիչներու տեղեկագիրն ընդունելէ առաջ, պարտաւոր էր նկատողութեան առնուլ որ լիւեալ եղբարց կողմէ ցոյց տրուած երաշխաւորը մի միայն դատարանի կողմէ կարգեալ քննչին ընդունած և վաւերացուցած պարտուց գումարը կ'երաշխաւորէր։ Պարտատերք ոմանք՝ որք պատշաճ չէին սեպած համակերպիլ այս ձեւակերպութեան, երաշխաւորութենէ դուրս ձգուած են։ Արդ, ըստ որում Ֆէտէրպոյի մը պարտքն է հաւատար աչքէ նկատել բոլոր պարտատէրերը, կը հետեւցուի թէ ի նը-պատս Լօկարիտէս եղբարց պարտատեալ Ֆէտէրպոն օրինական թերութեան մէջ է և իրը չեղեալ պէտք է նկատուի։

Ինչպէս որ կանխաւ ծանուցուած էր, Պ. Հէրքիւլ Թուպինի այս երկուշաբթի օր ներկայացաւ Անգլիական Հիւպատոսարանի դատարանին, ամբաստանուած լինելով թէ դեկտ. 24ին մամանակցած էր ատրճանակով մենամարտի մը որ արգիլուած է անգլիական օրինօք։ Ընդհ. դատախազի տեղակալ Ֆարլանդ ամբաստանելոյն պաշտպանութիւնն ստանձնած էին փաստաբան՝ Բիրս, Բլիֆթըն և Միճէն։ Վկայք դուրս հանուելով ունկընդրութեան սենեկէն, դատախազն յայտնեց այն պարագաները որոց վրայ հիմնուած է ամբաստանութիւնն ընդդէմ Պ. Թուպինի՝ որ, բացառաբար արտօնուած էր յանցաւորաց նստարանին վրայ չքաղմիլ։ Այս դատ յառաջ եկած էր Իոպէրթ Էտուբէրտի դեկտ. 24ի թուոյն Ֆրանսերէն մասին մէջ հրատարակեալ լուրէ մը յորում սկզբնատառերու միջոցաւ պատմուած էր երկու երիտասարդաց միջեւ ծագած թշնամութիւն մը և անոր հետեւանքը։ Զարմանալին այն է որ դատարանի դիւանին վրայ ո՛չ թէ Էտուբէրտի այդ թիւը կը կը գտնուէր, այլ Մրմանդալ լրագիր մը որ երկու օր յետոյ արտատպած էր Էտուբէրտի յօդուածն։ Պ. Բլիֆորտ Քօ. չէն՝ փաստաբան և մին Էտուբէրտի խմբագրաց, իբր վկայ ներկայանալով, օրինական երդումն ընելէ յետոյ հարցաքննուեցաւ դատաւորին կողմէ։ Պ. Բլիֆորտ յայտարարեց թէ ինք չէր լիշեալ յօդուածք գրողը, թէ տեղեակ չէր պատմուած իրողութեանց, թէ ինք չէր հսկեր Էտուբէրտի ֆրանսական մասի պարունակութեան վրայ, այլ սա միայն կրնար հաստատել թէ Մրմանդալ նոր նստարանով բերած էր Էտուբէրտի պատմածն։ Յանժամ Պ. Բիրս առարկեց թէ Մրմանդալի գրածն իրր վկայութիւն չէր կրնար ընդունուիլ այս գործին մէջ։ Ուրիշ վկայ ներկայացած չէր, Ն'երբեւի թէ Պ. Պ. Բրէֆիօզի և Բէրբրնեանի եւս հրաւիրուած էին, բայց անգլ. հպատակ չլինելով, պատշաճ չէին դատած գալ։ Տը. Ալան առաջարկեց դատարանին որ ինքդիրն յետաձգուի, մինչեւ որ կատարեալ վերկայութիւններ քաղել կարելի լինի։ Պ. Բիրս ընդդիմացաւ այս առաջարկին։ Ամենափոքր ապացոյց մ'իսկ չկայ թէ, ըսաւ, մենամարտ մը տեղի ունեցեր է և որոյ վրայ կարելի լինի օրաձգիլ դատին շարունակութիւնն։ արդէն, այս դատը «ստուերի մ'ստուերէն ալ աւելի անշօշափելի է» յարեց։ փաստաբանը մինչդամսայն պնդեցին թէ հաւանական չէր որ օտար հպատակ վերկայք ուզեն դատարանին ներկայանալ ուրիշ անգամ։ Եթէ մէջ բերուած իրողութիւնք ճշմարիտ են, ըսին, այդ վկայք ֆրանսական օրինաց ենթակայ են և կարելի չէ բռնադատել դանոնք որ անգլ. դատարանի մ'առջեւ վկայութեան գան։

Դատաւորք պատասխանեց, թէ օրինաց ճշդիւտ հետեւողութեամբ, կարելի չէր ստիպել զանոնք որ ներկայանան անգլ. հիւպատոսարանին, բայց թէ համազգական միջոցներով գուցէ կարելի լինէր այս բան։ Դատաւորք տրամագիր երդցաւ օրաձգումմ մը որոշելու կամ մէկ չաբաթուան և կամ հիւպատոսարանի կողմէ որոշելի պայմանաժամ մը, երեք օր առաջ ամբաստանելոյն իմաց տալու պայմանաւ։ Տը. Ալան առարկեց թէ մէկ չաբաթն անբաւական է պէտք եղած վկայութիւնները քաղելու համար, իսկ Տը. Բիրս առարկեց թէ պէտք չէ որ այսպիսի ամբաստանութիւն մը անորոշ ժամանակի մը համար ծանրանայ մարդու մը վրայ։ վերջապէս որոշուեցաւ դատին շարունակութիւնն օրաձգել։

(Իոպէրթ Էտուբէրտ)

Կիպրոսի տեղական կառավարութիւնը 11 օրուան քարանթինա հաստատած է Թրիէսթէն անդ գնացող նաւուց համար։

Աւեդրական Սենեկի Լլոյտնդ Գրիգոր որ Գիւչիւք Զամլըճայի մէջ 30 արտավար (այսինքն 30,000 օրթատուներ) այգի ունի, տարի առաջ նշմարեց որ մէկ անկիւն մը, 100ի չափ տունկեր տկարացած են։ կարծելով որ խնամքի պակասութեան պատճառաւ յառաջ եկած էր այս բան, մեծ հոգ տարաւ այդի այդ մասին վրայ։ սակայն հիւանդութիւնը փոխանակ նուազելու աւելի եւս տարածուեցաւ այգւոյն միւս մասանց մէջ եւ բարձր ու առոյգ տունկերն սկսան վատ եւ չոր լինիլ։ Այժմ, օրթատուրիզը կը տարածուի 6000է աւելի տունկերու վրայ։ Հետեւաբար կարելի է գաղափար մը կազմել այս սոսկալի հիւանդութեան հետեւանաց վրայ, եթէ առաջքը չառնուի ժամանակին։

«Ֆէնէր-Պահչէի եւ Գիւչիւք Զամլըճայի միջեւ, 1500 արտավար (իրր մէկ ու կէս միլիոն տունկ) Զաֆրանի այգի վարակեալ է օրթատուրիզէն։ Եթէ քիչ մ'ալ անցնի, խաղողի այդ սքանչելի տեսակը կրնայ բոլորովին բնաջինջ լինիլ։

1885 դեկտ. 16/27 ին վերջացող շաբաթուան մէջ Իզմիր-Այդընի երկաթուղւոյ հասոյթք եղած են 4704 անգլ. ոսկի, մինչ անցեալ տարւոյ մի եւ նոյն շաբաթուան հասոյթք եղած էին 4259 ոսկի։ Նոյն թուականին վերջացող 26 շաբաթներու իւրաքանչիւրի միջին հասոյթք հասած են՝ 5307 ոսկւոյ, մինչ 1884 տարւոյ այդ 26 շաբաթներու միջին հասոյթն էր 4698 ոսկի։

Դեկտ. 16/27 ին վերջացող շաբաթուան մէջ, Իզմիր-Գասապայի երկաթուղւոյ հասոյթք եղած են 3240 ոսկի, մէջ 1884 ի մի և նոյն շաբաթուան հասոյթք էին 2915 ոսկի։ Նոյն թուականին վերջացնող 26 շաբաթներու հասոյթք եղած էին 63,381 ոսկի, իսկ 1884 ին՝ 77,503 ոսկի։

Ա Զ Դ

ՕՍՊԻՏԱԼԱԿԱՆ ՍԵՆԵՆԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Ցանուցարական Սենեկին արձանագրեալ Պ. Պ. վաճառականներէն և սեղանաւորներէն կը խնդրուի որ բարեհաճին ներկայանալ յԸնդհանուր Ժողով՝ որ պիտի գումարի յառաջիկայ ուրբաթ, 27 դեկտեմբեր, յԱռեւտրական Սենեկին որ ի Գալատիա, Մէհմէտ Ալի փաշա խան թիւ 11, վասն ընտրութեան ընտրողաց՝ որք պիտի ընտրեն յիշեալ Սենեկէն հրաժարեալ անդամց յաջորդներն, ըստ իւր կանոնադրութեան։

Ներկայ ազգս պէտք է նկատել իրրեւ հրաւիրագիր։

21 դեկտ. 1885 Գալատիա

2—3

ԲԱՆԱԼԻ ԹՈՒՄԲՈՆՈՒԹԵԱՆ

Տ. ՊՈՂՍԱՃԵԱՆԻ

Այն բանային որ կը պարունակէ նոյն հեղինակին պատրաստած թուաբանութեան բոլոր խնդրոց լուծմունքն և պատասխանիքն, ուսուցչաց ոմանց թերեւս մեծ դիւրութիւն տայ։ նաեւ առանձին աշխատողներու համար։ ալ առաջնորդ մը կրնայ լինիլ։ հեղինակը քանցած է խնդրոց լուծմունքն յանկուցիչ և դիւրընթեռնելի ընել և յաջողած է ոչ նուազ օգտակար գործ մը ներկայել ազգին մանկուցոյն։ Գալափեան տպարանէն մաքուր տպագրութեամբ ի լոյս ելած՝ կը վաճառուի բոլոր հայ գրավաճառաց քով ի գին 10 ղրշ։

Ինչպէս Տ. Պողսճեան էֆէնտիի բոլոր քանակագիտական աշխատութիւնք, տարակոյս չունինք թէ այս յոյժ օգտակար գործն եւս լաւ ընդունելութիւն պիտի գտնէ դպրոցներու տնօրէններէն, դասատուներէն և ընդհանուր հասարակութենէն։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ռուսիոյ տնտեսական դպրոցներ պիտի բացուին Սիբիրիոյ մէջ եւս։

Բաց սատի, կ'ըսէ Ռուսիկ Կուրիէր, պետական խորհուրդն, իւրաքանչիւրին գիւղատնտեսական քանի մը հիւղերու, 52,000 ռուբլի առանձին վարկ յատկացուցած է յաջորդիկայ տարուան համար։

—Ռուսիոյ ներքին գործոց նախարարը նկատելով որ գիւղացւոց ընտանեկան բաժանումները մեծ հարուած կը պատճառեն Ռուսիոյ տնտեսական կացութեան, այս առթիւ ծրագիր մը մատուցած է գիւղական խորհրդոյ։

Պետական խորհուրդն որոշած է որ ընտանեկան բաժանումներ գիւղացոց համար։

Եւ, զարմանալի դիւրահաւանութեամբ, ծերոյ մի վիճակին վրայ անոր բերելիք տեղեկութեանց միայն կ'սպասէր, որպէս զի կատարէր զիւր այդ խոստումն։

Երկար չսպասեց։ Գամիսոն սպանելուն վրայ երկու ժամ չանցած, Պ. տը Մընէսթրոյ վերադարձաւ և զօրիորդն առանձին դռան այն փոքր դահլիճի մէջ, ուր հայրը խեղդամահ սպանուած էր ոճրագործի մը ձեռքէ։

Հոն մնաս առանց մէկէ մը տեսնուելու, վասն զի Պրիժիթի՝ իւր սրտնեղութիւնն անցունելու համար՝ դուրս եկած էր նպար գնելու։

Գամիլ սովորականէն նուազ փութով ընդունեց զայն։ Սիրան ուրախ չէր, և խորոն տեղեկութիւն հարցուց Գուբարիւի և որդւոյն վրայ։

—Լրագրաց գրածը սխալ է, ըսաւ Պ. տը Մընէսթրոյ վստահ դէմքով։ Սէն-Տրենի դաշտին գէպքը գրեթէ անոնց պատմածին պէս է, բայց զոհերն ուրիշ երկու խեղճեր են։ մարդ մ'և տղայ մը։ որ բնաւորան չունենալով՝ անդ կը պահէին, և որք բնաւ նմանութիւն չունին ձեր փնտռած մարդոց։ Նկուղին պայթումն յանկարծակիի բերեր է զանոնք։

—Ինչ կ'ըսէք, տղա՞ն ալ մեռեր է, մըրմնջեց Գամիլ։

—Քանի մը ժամ միայն ապրեր է։ առած վէրքերն յոյժ ծանր լինելով, չէ կրցած օրն հանել։ Այս առաւօտ թաղեր են։ Այս մանրամասնութիւններն ոստիկանութեան տեսուչն իմացայ, որ այսպէս տեղեկագրած է։

—Երկուքն ալ մեռե՞ր են։։։ ինձ համար, կը յեղյեղէր օրիորդն արտասուաթոր աչօք։

